Երկբաղադրիչ բայական դարձվածքները Վ.Մուղնեցյանի ստեղծագործություններում

Կիրակոսյան Լուսյա
Ալավերդյան Լիլիթ

Հանգուցային բառեր. *դարձվածային միավորներ, դարձվածային կապակցություններ, կաղապար, վիճակագրական հաշվումներ, ինքնատիպ մտածելակերպ, ազգային հոգեբանություն*

Դարձվածքները յուրաքանչյուր լեզվի բառագանձի այն միավորներն են, որոնք իրենց մեջ տեղակայված ունեն տվյալ ազգի էթնիկական խմբի ազգային մտածելակերպի ու հոգեբանության, ազգային կեցության ու գիտակցության տարրերը: Դրանք միևնույն ժամանակ յուրաքանչուր անհատի ազգային մտածողությունն են արտահայտում: Հենց այս առումով էլ դարձվածքները նպաստում են լեզվի ժողովրդայնությանը: Ցանկացած ուսումնասիրություն, որ վերաբերում է դարձվածային միավորների քննությանը, միշտ էլ արդիական ու գերակա է, քանի որ դարձվածքների ստեղծումը հատուկ է բոլոր ժամանակներին ու պատմական բոլոր դեպքերին ու դիպվածներին: Դարձվածքները կառուցվածքային փոփոխության ենթարկելով՝ փոխվում է նաև բովանդակային մասը:

Նման քննությունը հնարավորություն է տալիս վեր հանելու տվյալ հեղինակի գործածած դարձվածային միավորների կառուցվածքային առանձնահատկությունները, վերջիններիս ստեղծման կաղապարները հանդիպադրել արդեն գոյություն ունեցողների հետ, ըստ այդմ՝ կատարել մտահանգումներ և ըստ այս կամ այն առանձնահատկության՝ խմբավորել դարձվածային միավորները:

Տվյալ հետազոտությունը հետամուտ է պարզաբանելու Վահագն Մուղնեցյանի երկերում կիրառված դարձվածային միավորների կառուցվածքային առանձնահատկությունները: Խնդիրը որոշակի է, պետք է համալիր ու մանրամասն քննության առնվեն երկբաղադրիչ բայական դարձվածքները: Նման ուսումնասիրությունը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը.

1.Համապատասխան բնագրերից առանձնացնել երկբաղադրիչ բայական դարձվածքները, քննել վերջիններիս կառուցվածքային տիպերը:

2. Առանձնացնել դարձվածքները՝ ըստ ստորադաս անդամի խոսքիմասային պատկանելության, ներկայացնել վիճակագրական հաշվումներ՝ ըստ հայերենի խոսքի մասերի՝ դարձվածքի կազմում հանդես բերած կապակցելիության հնարավորության:

3. Լեզվում արդեն իսկ գոյություն ունեցող դարձվածաստեղծ կաղապարները հանդիպադրել Վ.Մուղնեցյանի երկերի դարձվածքների հետ, փորձել պարզել վերջիններիս ստեղծման օրինաչափությունները և յուրահատկությունները:

Դարձվածքի մեջ առաջին հերթին առկա են փոխաբերականությունն ու պատկերավորությունը: Դարձվածային միավորների տարբերակման չափանիշներ են համարվում նաև նրանց կայունությունը, իմաստային ամբողջականությունը, կառուցվածքային տարբերակների հնարավորությունը: Որպես լեզվի իմաս-

տային ինքնուրույն միավոր՝ դարձվածքը օժտված է բառային բոլոր հատկանիշներով՝ բառային իմաստով, քերականական ձևավորվածությամբ ու կարգերով:

«Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր» [3, 368]:

Ա.Ա.Մուրվալյանը դարձվածքները անվանում է դարձվածային առանձնահատուկ արտահայտություններ: Նա դարձվածքն ու կայուն բառակապակցությունները տարբեր միավորներ չի համարում: Ըստ Ա.Մուրվալյանի՝ դարձվածք տերմինը նշանակում է կայուն բառակապակցություն. «Դարձվածքը բառերի վերաիմաստավորված կայուն կապակցություն է» [2, 27]:

Ս.Մելքոնյանը դարձվածքները համարում է խտացված խոսքի անզուգական արտահայտություն. «Դրանց սեղմությունը պայմանավորող հիմնական հանգամանքը բառը ընդհանրացման մեծ ուժով օգտագործելն է, որտեղ «հստակ» բառերը հանդես են գալիս որպես բովանդակության կրողներ, որպես խորհրդանիշ: Դրա շնորհիվ էլ դարձվածքները ընթերցողին ազատ հնարավորություն են տալիս խոսքի բովանդակության ընկալման հարցում ակտիվ լինել, իրողությունը յուրովի ըմբռնել» [1, 193]:

Դարձվածքները մեծ մասամբ ժողովրդական լեզվամտածողության արդյունք են: Ձևավորվում են հիմնականում խոսակցական տարբերակում, ապա աստիճանաբար թափանցում են գրական լեզու: Դարձվածքները կարող են ստեղծվել գրական երկերում կամ դրանց հիման վրա: Դրանք խոսքի ոճավորման կարևոր միջոց են: Դարձվածքները նպաստում են նաև խոսքի սեղմությանը:

Գեղարվեստական խոսքը հարուստ է պատկերավոր դարձվածքներով, որոնք գեղարվեստական երկի ժողովրդայնությունն ապահովող լեզվական անգերազանցելի միջոցներ են: Դարձվածքները նպաստում են նաև առանձին անձանց, կերպարների հոգեվիճակը տեսանելի դարձնելուն:

Դարձվածքները կազմում են բառապաշարի կարևոր մասը և ժողովրդի հոգևոր մշակույթի ու լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունն են արտահայտում: Մեծ է դարձվածքների դերը խոսքի գեղեցիկ դրսևորման մեջ. դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, շիտակություն և մաքրում խոսքը միապաղաղությունից, միօրինակությունից ու չորությունից:

Այսպիսով, դարձվածքները կայուն կապակցությունների յուրօրինակ շերտ են, որոնք մյուս բառակապակցություններից տարբերվում են իրենց բնորոշ հատկանիշներով, առաջին հերթին նրանով, որ դարձվածքները կայուն ու վերաիմաստավորված կապակցություններ են:

Հայ գեղարվեստական խոսքը, առավելապես արձակը հարուստ է թարմ ու ինքնատիպ, գեղեցիկ ու պատկերավոր դարձվածքներով:

Դարձվածքների լավագույն շտեմարան են Վ. Մուղնեցյանի «Ալիզ», «Եկվորներ», «Տաբու» վեպերը: Մի շարք ինքնատիպ դարձվածքների գործածությամբ

ավելի տեսանելի ու ամբողջական է դառնում հեղինակի պատկերավոր մտածողությունը:

Իրենց իմաստաքերականական բազմազան առանձնահատկությունների, քերականական կարգերի հարստության, կառուցվածքային տիպերի բազմազանության շնորհիվ հայերենի դարձվածաբանական համակարգում ամենամեծ կշիռն ու գործածության ամենալայն ոլորտն ունեն բայական դարձվածային միավորները:

Դառնալով դարձվածքի բաղադրիչ՝ բայն իր իմաստային, բառաքերականական հատկանիշներով է օժտում նաև դարձվածային կապակցությունը, որը ոչ միայն անվանում է գործողությունը, եղելությունը կամ դրությունը, այլև արտահայտում է բայերի հետ կապված ամենաբազմազան վերաիմաստավորված հարաբերություններ, որոնք այդ իմաստով չէր կարող արտահայտել սովորական շարահյուսական կապակցություններում: Այսպես՝ իր սովորական իմաստով սովորական շարահյուսական կապակցություններում *գալ* բայը շարժում, տեղաշարժ է նշանակում [*տուն գալ*]: Ցանկացած ազատ բառակապակցության մեջ այդ բառը պահում է իր հիմնական իմաստը, բայց դարձվածային կապակցությունում այն հաճախ դադարում է շարժման գաղափար արտահայտելուց և կապակցության մյուս բաղադրիչների շնորհիվ՝ բոլորովին նոր իմաստ է ձեռք բերում: Օրինակ՝ Քավոր Մամբրե, մի տեղ կարդացել եմ, թե տայգայում ոնց են արջի *հախից գալիս*.... [4, 208]:

Մեր կողմից ուսումնասիրվելիք նյութը երկբաղադրիչ բայական դարձվածքներն են, որոնք գերակշռող մասն են կազմում Վահագն Մուղնեցյանի՝ մեր ուսումնասիրած ստեղծագործությունների դարձվածային միավորների մեջ:

Ինչպես նշեցինք, հայերենում շատ են բայական դարձվածքները: Ընդ որում նկատելի է, որ Վ.Մուղնեցյանի՝ մեր կողմից ուսումնասիրած ստեղծագործություններում ամենից հաճախ հանդիպում են *անել, անցնել, գալ, գցել, ընկնել, հանել, տալ* բայերով կազմված դարձվածքները: Այսպես՝ .... դեռ էնքան կկորցնեն, մինչև *գլխի ընկնեն*, թե ինչ են կորցնում.... [6, 9]: Ախր, այ Կալո ջան, քեզնից ո՞վ է *գլուխ հանում*, վախենում էի գամ՝ կոպտես, խայտառակ անես [6, 69]: .... տղերքին խաբում տանում էր հետը, որ, իր բացակայությունից օգտվելով՝ չմտնեն արտը *ոտնատակ անեն* [4, 6]: Բայց ոչ մեկի *մտքով չանցավ*, և ոչ ոք չտեսավ.... [4, 295]:

Ինչպես ամեն մի դարձվածային միավորի, այնպես էլ բայական դարձվածային միավորի ելակետային ձևը երկանդամ կառույցն է. դա ամեն մի դարձվածքի ամենաստորին տիպն է:

Երկանդամ բայական դարձվածային միավորների գերադաս անդամը օժտված է տարբեր խոսքի մասերով ծավալվելու հատկանիշներով: Երկանդամ կառույցները բայական դարձվածքների համակարգում թվով ավելի շատ են ու ամենամեծ կիրառությունն ունեն: Պատճառը կարճ և հեշտ վերարտադրելի լինելն է:

Վ.Մուղնեցյանի՝ մեր կողմից ուսումնասիրված ստեղծագործություններում հանդիպում են երկբաղադրիչ հարադրավոր բայեր, որոնք միաժամանակ ինքնու-

ռույն բայական – բառույթային միավորներ են, արտահայտում են այլաբանական փոխաբերական իմաստ և դարձվածքի արժեք ունեն, ընդ որում հարադիրը միշտ նախադաս է գործածվում, բայական բաղադրիչը՝ ետադաս: Ինչպես՝ Սակայն անքնությունն ու սալորօղու տնական ազդեցությունը նրան թույլ չտվեցին ժամանակին *գլխի ընկնել*, որ իր մարմնի հետ ինչ-որ արտառոց բան է կատարվում [6, 19]: …. Փայլակը շատ արագ *աչքի ընկավ* որպես ձևավորված անհատականություն [6, 40]: Ձաղկոցները շարունակվեցին, մինչև Բաբուռովը *հալից ընկավ* [6, 50]: Ապա *աչքով արեց* շշված, եղբայրների խոսակցությունից բան չհասկացող աղջկան…. [6, 286]: Թե ինչո՞ւ էր դրան այդչափ *երես տվել*…. [4, 7]:

Հանդիպում են երկբաղադրիչ դարձվածքներ, որոնք բայական գերադաս անդամով բառակապակցություններ են: Այսպես՝ …. *գլուխը կորցրած* խեղճուկրակ Պարզախոսը մնացել էր մենակ ու մեկուսի [6, 65]: Վարիչ Արամիչը *շրջանցեց* քարտուղարուհու *հարցը*…. [6, 101]: Ամալիկը զարմացած նայում էր ընկերներին, նայում էր՝ իր խոսքից փոշմանած, *սիրտը մրմռալով* [5, 42]: Տանձուտը *շունչը փչելով*, տեղ-տեղ կորչելով ու էլի երևալով թավալվում էր…. [4, 7]: Հանկարծ Հուլիսը *պատեպատ ընկավ* ու ոռնաց…. [4, 14]:

Այս վերջին տեսակի դարձվածքները շատ ավելի լայնորեն են արտացոլում բայ խոսքի մասի՝ այլ խոսքի մասերի հետ ունեցած բազմատեսակ կապերն ու հարաբերությունները: Նման դարձվածքները մյուս տեսակի դարձվածային միավորներից տարբերվում են ոչ միայն իրենց քանակով, այլև բաղադրիչների կապակցության ձևերով՝ բաղադրիչների միացության սերտության աստիճանով, բազմազան արտահայտություններով ու դրսևորումներով, ներքին շարահյուսական հարաբերություններով, բաղադրիչների միասնաբար արտահայտած նշանակություններով:

Երկբաղադրիչ բայական դարձվածքներ են կազմվում ինչպես չեզոք, այնպես էլ ներգործական սեռի բայերով: Չեզոք սեռի բայերով կազմված դարձվածքները արտահայտում են ինչպես համադասական՝ ենթակայի և ստորոգյալի, այնպես էլ ստորադասական՝ խնդրային, պարագայական հարաբերություններ:

Գոյական բաղադրիչը համադասական հարաբերության դեպքում՝ ուղղական, իսկ ստորադասական՝ խնդրային ու պարագայական հարաբերության դեպքում՝ հայցական, տրական, բացառական և գործիական հոլովներով է արտահայտվում: Այսպես՝ Այստեղ Բաբուռովի *միտքը պայծառացավ*…. [6, 112]: ….նա *լեզու գտավ* շուկայի բժշկի՝ նախկին մսագործ Անտաշ Համոյի հետ [6, 49]: ….ես *գլխի ընկա*, որ հոգի ասածը մարդու խելքն ու միտքն ա [4, 18]: Այդ օրերից մի օրը Բաբուռովի սնարի մոտ հերթապահում էր կուսանդամավճարները ժամանակին չմուծելու պատճառով գլխավորի *աչքից ընկած* ավագ բուժքույրը [6, 111]: –*Երեսով ես տալի՞ս*,– քարտուղարը հոնքերը կիտեց ու կատաղի հայացքով շամփրեց Բաբուռովին…. [6, 107]:

Ներգործական սեռի բայերով սովորաբար գործողության և ուղիղ խնդրի հարաբերություն արտահայտող դարձվածքներ են կազմվում: Այսպես՝ Համալսարանում քիչ է *հոգիներս հանում*, հիմա էլ՝ էստեղ …. [6, 233]: ….որքան չարչարվեց

միտքը փոխել՝ արյունը դեմ կանգնեց…. [6, 9]: ….Փայլակը *միտք արեց*, որ ավելի լավ է հանգիստ թողնի նրան…. [6, 12]: Դո՞ւք խի եք *քիթներդ կախել….* [4,199]:

Վ.Մուղնեցյանի ստեղծագործություններում առանձնացրել ենք երկբաղադրիչ բայական դարձվածային միավորների ներքոնշյալ կաղապարները.

«Գոյական+բայ» կառուցվածքային տիպի դարձվածքները մեծամասնություն են կազմում: Մեր ուսումնասիրած ստեղծագործություններում բայի հետ գոյականը կապակցության մեջ է մտնում գրեթե բոլոր հոլովաձևերով.

ա) *ուղղական հոլովով:* Ուղղական հոլովով դրվող գոյական ստորադաս բաղադրիչները բայ գերադաս անդամի համար ենթակայի շարահյուսական պաշտոն են կատարում: Այսպես՝ Իր իմացած բոլոր հայհոյանքներով ու անեծքներով քարտուղարին պախարակեց՝ *սիրտը չհովացավ* [6, 109]: Հայելու մեջ Վարիչ Արամիչի սափրած գլուխը տեսնելուն պես Այսպիսիի *լեղին ճաքել էր….* [6, 160]: …. Վահրամի *շունչը կտրվեց….* [4, 79]:

բ) *Հայցական հոլովով:* Մեր ուսումնասիրած ստեղծագործություններում երկանդամ բայական դարձվածային միավորներից ամենամեծ թիվը կազմում են հայցական հոլովով դրված գոյական ստորադաս անդամով արտահայտված կառույցները: Օրինակ՝ Նա երկու սիրամարգ էր բերել և հաճախակի *աչքը գցում էր* նրանց կողմը [6, 10]: …. Ծիգուլի անճոռնի ձեռագրից *գլուխ չհանեց….* [6, 35]: Ամուսնու մահից հետո Եվգինեն առաջին անգամ թույլատրեց *սեղան գցել* մեծ սենյակում…. [4, 80]:

գ) *Տրական հոլովով:* Վ.Մուղնեցյանի ստեղծագործություններում տրական հոլովով արտահայտված գոյական ստորադաս բաղադրիչով դարձվածային միավորներն այնքան էլ քիչ չեն, սակայն իրենց գործածության հաճախականությամբ զիջում են հայցական հոլովով դրված գոյական ստորադաս անդամով հանդես եկող դարձվածային միավորներին: Տրական հոլովով դրվող գոյական ստորադաս բաղադրիչը կարող է հանդես գալ որոշյալ և անորոշ առումներով: Վերջինս գործածության համեմատաբար ավելի քիչ հաճախականություն ունի: Օրինակ՝ ….բա որ *կողի ընկնեմ* ու կյանքի ուղեգիր չտա՞մ, հը՞…. [5, 105]: …. միայն անտառի որդին էր աշխարհի փակ *ականջին հասցնում* մորթված ծառերի հառաչանքը…. [6, 350]:

դ) *Բացառական հոլովով:* Մեր ուսումնասիրած ստեղծագործություններում բավականին քիչ են հանդիպում բացառական հոլովով դրված գոյական ստորադաս բաղադրիչով արտահայտված դարձվածային միավորներ: Բայը բացառական հոլովով արտահայտված գոյականի հետ զուգորդվելիս մեծ մասամբ կազմում է այնպիսի դարձվածքներ, որոնք հիմնականում հարադիր բայերի արժեք են ունենում: Այսպես՝ Եզնիկին սկսեց աջուձախ խստագույն բուժական շառաչուն ապտակների արժանացնել այնքան ժամանակ, մինչև վերջնականապես *հալից ընկավ* …. [6, 250]: Արա Դարչո, էն տիկին Դիանան *ձեռից գնում ա….* [4, 226]:

ե) *Գործիական հոլովով:* Գործիական հոլովով դրվող գոյական ստորադաս բաղադրիչով արտահայտված երկբաղադրիչ կառույցները ևս շատ չեն հանդիպում մեր ուսումնասիրած ստեղծագործություններում: Մեզ հանդիպած օրինակ-

ներում նման կառույցները մարդու գործելակերպի տարբեր ձևեր ու եղանակներ են արտահայտում: Մի մասը գործողության սաստկություն է ցույց տալիս: Օրինակ՝ Հրացայտ *հայացքով շամփրեց* փեսային…. [6, 76]:

Մյուս մասը պարզապես հարադիր բայերի արժեքով է հանդես գալիս: Այսպես՝ Նրա *մտքով* շատ բան *էր անցել….* [6, 197]: ….Վահրամն *աչքով արեց* Նշանին ու Էռնիկին…. [4, 243]:

Ամփոփելով գոյական ստորադաս բաղադրիչներով երկանդամ բայական կապակցությունների՝ համապատասխան հոլովներով հանդես գալու քննությունը՝ հարկ ենք համարում ստացված փաստերը ներկայացնել գծապատկերային տեսքով.

Գոյական ստորադաս բաղադրիչներով երկանդամ բայական դարձվածքների հոլովառությունը.

Հոլովներ	**Թվային արտահայտությունը**
Ուղղական	27
Տրական	55
Հայցական	88
Բացառական	14
Գործիական	18
Ընդամենը	202

Երկբաղադրիչ բայական դարձվածքների մեջ մենք ընդգրկել ենք նաև այնպիսիները, որոնց գերադաս անդամը՝ բայը, կապական կառույցի անդամ է: Այսպես՝ …. *խելքի գալուց հետո* գիտակցեց…. [6, 321]:

Երկբաղադրիչ բայական դարձվածքների մեջ առանձնացրել ենք հետևյալ կառույցները.

ա) *Ինքնուրույն գործածությունից զուրկ բարդություն+բայ:* Օրինակ՝ ….էն խեղճ թռչուններին *լեղաճաք արիր* [6, 12]: ….իմ ջահելը վերջապես *խելքահան արեց* այդ պառավ հիմարին [6, 82]: Վախենամ, թե քու հոգին *շներոց ըլի* [4, 20]:

բ) *Ինքնուրույն գործածությունից զուրկ արմատ+բայ:* Այսպես՝ Ադա, դե ձենդ կտրի, *տազ արա….* [4, 59]: ….կարող ա էնքան *զահլա տանի*, տան,- նկատեց Դարչոն [4, 89]:

Ժամանակակից հայերենում բացառական հոլովը հոդ չի ստանում: Սակայն մեր ուսումնասիրած ստեղծագործություններից մեկում (*Տաբու)* հանդիպում է այնպիսի երկբաղադրիչ դարձվածք, որի գոյական ստորադաս անդամով բաղադրիչը հանդես է գալիս հոդով: Այսպես՝ ….մեղավորը անկախությունն էր, մեր տնտեսությունների *հախիցն էկավ* [6, 306]:

Ալիզ ստեղծագործությունում հանդիպել ենք *անել* և *տալ* բայերով երկբաղադրիչ դարձվածքներ, որոնք հոմանշություն են դրսևորում: Այսպես՝ ….տղերքին խաբում տանում էր հետը, որ իր բացակայությունից օգտվելով՝ չմտնեն արտը *ոտնատակ անեն* [4, 6]: և՝ ….սաղ քաղաքը *ոտնատակ տվի….* [4, 20]:

Վ.Մուղնեցյանի ստեղծագործությունները հարուստ են նաև այլ խոսքի մաս + բայ կաղապարով դարձվածային միավորներով:

Բայ+ածական: Հայերենում ածականները նույնպես կարող են զուգորդվել բայ գերադաս անդամի հետ և կազմել երկանդամ բայական դարձվածքներ, որոնք խոսքի մեջ հիմնականում հարադիր բայի արժեքով են կիրառվում: Այսպես՝ …. *ապուշ կտրած* նայում էր…. [6, 281]: ….տեղից չշարժվեց, աչքերը չբացեց, *չոր կտրեց* Մուշեն [6, 286]:

Բայ+դերանուն: Վ.Մուղնեցյանի ստեղծագործությունների մեջ երկբաղադրիչ բայական դարձվածքների կառուցվածքային տիպերով առանձնանում է *բայ+դերանուն* կապակցությունը: Դերանունները իրենց հոլովաձևերով նույն կարգի հարաբերակցությունների մեջ են մտնում, ինչ-որ գոյականները, սակայն այն տարբերությամբ, որ նրանք կապակցելիության ավելի սահմանափակ հնարավորություն ունեն, քան գոյականները: Այսպես՝ Աղջկա ներկայությունից անհարմար զգալով՝ նա *հավաքեց իրեն*, ցածր հազաց ու հարցրեց [5, 23]:

Բայ+մակբայ: Այս կաղապարով կառույցները ևս բավականին քիչ են հանդիպում մեր ուսումնասիրած ստեղծագործություններում: Այսպես՝ ….*մեջ ընկավ* արդեն վաղուց վրեժխնդրությամբ լցված Կվալտ Համիկը…. [6, 187]: Հանկարծ Հուլիսը *պատեպատ ընկավ* ու ոռնաց…. [4, 14]:

Հանդիպել են դարձվածքներ, որոնց լրացում բաղադրիչն արտահայտված է փոխանվանաբար գործածված մակբայով: Օրինակ՝ …. իսկ շարքային գայլերը *տակները լցնելով*՝ նետվեցին գետն…. [6, 22]: ….գնանք *դեմներն առնենք*, մինչև Ղաչաղի ձորից տղերքը հասնեն [6, 278]:

Վ.Մուղնեցյանի ստեղծագործությունները հարուստ են երկանդամ բայական դարձվածային ինքնատիպ կապակցություններով (կազմված հիմնականում *անել, անցնել, գալ, գցել, ընկնել, հանել, տալ* բայերով), որոնց ուսումնասիրությունը որոշակիորեն կհարստացնի ժամանակակից հայերենի դարձվածքների կազմը: Հեղինակը գրական ձևերի հետ միասին չի խորշել իր ստեղծագործություններում գործածելու բարբառային կառույցներ, նաև անհանձնարարելի ձևեր [օրինակ՝ *տակները լցնել* և այլն]: Հատկապես վերջիններս, կարծում ենք, դեռևս անհրաժեշտ ուսումնասիրության կարոտ են:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984:
2. Մուրվալյան Ա., Հայոց դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959, 251 էջ:
3. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982թ., 439 էջ:

* * *

4. Վ.Մուղնեցյան, Ալիզ, Երևան, 1986թ.:
5. Վ.Մուղնեցյան, Եկվորներ, Երևան, 1989թ.:
6. Վ.Մուղնեցյան, Տաբու, Երևան, 2008թ.:

Двухкомпонентные глагольные фразеологизмы в творчестве В. Мугнецяна

Киракосян Люся
Алавердян Лилит

Резюме

Ключевые слова: *фразеологические единицы, фразеологические сочетания, модель, статистические подсчеты, самобытное мышление, этнопсихология*

Произведения В. Мугнецяна насыщены самобытными двухкомпонентными глагольными сочетаниями (они образованы, в основном, с помощью глаголов «делать», «приступить», «прийти», «бросить», «упасть», «вытащить», «дать»), исследование которых значительно обогатит состав фразеологизмов современного армянского языка.

Автор употреблял, прежде всего, литературные формы, но в то же время не пренебрегал диалектными конструкциями и даже вульгарными формами (например: «сделать под себя» и т.д.). Последние, по нашему мнению, особенно нуждаются в дальнейшем исследовании.

Two-Word Verb Phrases in V. Mughnetsyan's Works

Kirakosyan Lusya
Alaverdyan Lilit

Summary

Key words*: phraseological units, phraseological collocations, construction, statistical data, original thinking, national psychology*

V. Mughnetyan's works are rich in original two-word phraseological collocations (primarily formed by the verbs *do, pass, come, drop, fall, remove, give*), the study of which will definitely enrich Armenian phraseology. Alongside literary forms, the author uses dialectical constructions, even slang and taboo words (e.g. to soil one's pants). In our estimation, the latter needs further investigation.